Օպտիկա-մանրաթելային համակարգով 10Գբ թողունակությամբ տվյալների փոխանցման ծառայության ձեռքբերման պայմանագիր N ՀՀՈՑ-ԲԸՀԾՁԲ-14/1

ք. Երևան "02" հունիսի 2014թ.

"Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց" ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Գ. Ամալյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և "ՅՈՒՔՈՄ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Հայկ Եսայանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է օպտիկա-մանրաթելային համակարգով 10/Գբ (տաս գիգաբիթ) թողունակությամբ տվյալների փոխանցման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետ՝ Բնութագիր) պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Բնութագրին համապատասխան և սահմանված ժամկետներում:

1.3 Ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է 15 (տասնհինգ) տարի: Ընդ որում օպտիկա-մանրաթելային համակարգի միջոցով տվյալների փոխանցման և համակարգի սպասարկման ծառայության մատուցումը սկսվում է օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելուն հաջորդող ամսվա 1-ին օրվանից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Բնութագրին չհամապատասխանող Ծառայություն, այն է օրացույցային մեկ տարվա ընթացքում Բնութագրով նախատեսված պայմաններից եղել է իրական շեղում.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն

պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) Օրացույցային մեկ տարվա ընթացքում մատուցված Ծառայությունը չի համապատասխանել Բնութագրով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Սույն պայմանագրով Կատարողի կողմից անցկացված օպտիկա-մանրաթելային համակարգի միջոցով տվյալների փոխանցման Ծառայությունից, առանց Կատարողի գրավոր համաձայնության 50Մբ/վ-ից (հիսուն մեգաբիթ վայրկյանից) ավել թողունակություն չտրամադրել(չթույլատրել օգտվելու) երրորդ անձի:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը.

2.3.2 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցումը կասեցնել ոչ ավել քան վեց ամիս ժամկետով՝ այդ մասին առնվազն երեսուն օրացուցային օր առաջ գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Բնութագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Սույն պայմանագիրը միակողմանիորեն վաղաժամկետ լուծելու դեպքում այդ մասին առնվազն 6 ամիս առաջ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին՝ Պատվիրատուին վճարելով՝

1) սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության արժեքի եռապատիկը և սույն պայմանագրի 5.2

կետով նախատեսված տուգանքը, եթե վաղաժամկետ լուծման օրը լրանում է մինչև սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 7 տարի 6 ամիսը.

2) սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության արժեքի կրկնապատիկը և սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, եթե վաղաժամկետ լուծման օրը անցնում է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 7 տարի 6 ամիսը:

2.4.5 Սույն պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը և կասեցման ողջ ժամանակահատվածում Ծառայության ապահովման նպատակով Պատվիրատուի կողմից իրականացված՝ փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

2.4.6 Սույն պայմանագիրը միակողմանիորեն վաղաժամկետ լուծելու դեպքում, եթե չի ապահովում սույն պայմանագրի 2.4.4 կետը, Պատվիրատուին վճարել օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության արժեքի եռապատիկը և սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված արձանագրության երկու օրինակ (Հավելված N 2):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն արձանագրությունը ստանալու պահից տասնօրա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը, նշված փաստաթղթերից որևէ մեկը տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին չներկայացնելու դեպքում, Ծառայությունը համարվում է պատշաճ մատուցված և պատվիրատուի կողմից անառարկելիորեն ընդունված:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 569 500 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից՝

- 398 500 000 ՀՀ դրամը՝ օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության գինն է.

- 171 000 000 ՀՀ դրամը՝ օպտիկա-մանրաթելային համակարգի միջոցով տվյալների փոխանցման և համակարգի սպասարկման ծառայության գինն է (ամսական գինը կազմում է 950 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության մատուցման գումարը Պատվիրատուն կարող է Կատարողին տրամադրել որպես կանխավճար՝ Կատարողի կողմից բանկային երաշխիքի ձևով կանխավճարի ապահովում ներկայացնելու պայմանով, երեսուն աշխատանքային օրվա ընթացքում: Կանխավճարի մարումն իրականացվում է օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության արդյունքի ընդունման արձանագրության հիման վրա՝ կատարվող վճարումից նվազեցում (պահումներ) կատարելու ձևով: Նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում և/կամ սույն պայմանագրի 2.4.4, 2.4.5 և 2.4.6 կետերով նախատեսված դեպքերում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված՝ օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված

օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.2.3 կետով նախատեսված պարտավորությունը խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի պահանջել Պատվիրատուից 30-օրյա ժամկետում իրեն հետ վճարել՝ օպտիկա-մանրաթելային համակարգի միացման ծառայության ամբողջ գինը և/կամ տույժ, մինչև թույլ տված խախտումը վերացնելու օրը՝ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով յուրաքանչյուր օրվա համար:

5.7 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.8 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունը, բացառությամբ 2014թ-ի, մատուցվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի հիմման վրա, որը կնքվում է մինչև յուրաքանչյուր տարվա 1-ին ամսա 15-րդ աշխատանքային օրը:

7.2 Այն դեպքում, երբ "Գնումների մասին" ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի

կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է ութ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N1.1 և N2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
"Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց" ՓԲԸ	"ՅՈՒՔՈՄ" ՍՊԸ
ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	ՀՎՀՀ 00024873
"Յունիբանկ" ՓԲԸ	Հասցե՝ ՀՀ, Երևան, Տերյան 19շ., բն.4
ՀՎՀՀ 01501898	Բանկ «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 24100200177400	Հ/Հ՝ 001-264993-001
	Հեռ.՝ (+374) 60 444444
	Տնօրեն՝ Հայկ Եսայան
----------	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«02» հունիս 2014թ. կնքված N ՀՀՈՅ-ԲԸՀԾՁԲ-14/1
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Օպտիկա-մանրաթելային համակարգով 10Գբ թողունակությամբ տվյալների փոխանցման ծառայության մատուցման

Օպտիկա-մանրաթելային համակարգը նախատեսվում է թվով 64 կայանների միջև մուլտիքաստ և յունիքաստ ԱյՊի (IP) տեսաինֆորմացիայի ազդանշանների տեղափոխման և այդ կայաններում տեղադրված սարքավորումների ղեկավարման ու մոնիտորինգի համար:

Կայաններից 10-ը հանդիսանալու են թվային մուլտիպլեքսների ձևավորման կետեր: Դրանք են. Երևանի գլխակայանը (Head End) և Գյումրիի, Վանաձորի, Իջևանի, Գավառի, Պտղնիի, Էջմիածնի, Արտաշատի, Եղեգնաձորի, Կապանի մարզային մուլտիպլեքս կայանները: Անհրաժեշտության դեպքում օպտիկա-մանրաթելային համակարգը պետք է հնարավորություն ընձեռնի վերահաստատելու նշված 10 կետերի տեղակայումը՝ 64 կայանների սահմաններում:

Վերոհիշյալ կայանները կապակցող ցանցը հանդիսանալու է հիմնական և պետք է բավարարի հետևյալ պայմաններին.

- ընդհանուր թողունակությունը՝ 10 Գբ,
- հուսալիությունը՝ 99.99 %,
- կետերի միացումը՝ յուրաքանչյուրը 1Գբ թողունակությամբ երկու ինտերֆեյսով, <ամենքը-ամենքի> հետ սկզբունքով: Անհրաժեշտության դեպքում պետք է հնարավորություն ընձեռնվի միացման ինտերֆեյսը փոխարինելու 10 Գբ-ով:

Մնացած 54 կայանները կապակցող ցանցերը հանդիսանալու են տարածաշրջանային և կրկնակի ֆիզիկական ռեդուրենտ գծերով ու ցանցային <աստղաձև> կամ <օղակաձև> լուծումներով պետք է միացվեն տվյալ մարզային մուլտիպլեքս կայանին (համաձայն Հավելված 1.1 ցանկի): Տարածաշրջանային ցանցերը պետք է բավարարեն հետևյալ պայմաններին.

- ընդհանուր թողունակությունը՝ 1 Գբ յուրաքանչյուր տարածաշրջանային ցանցում, անհրաժեշտության դեպքում մինչև 10Գբ ավելացման հնարավորությամբ,
- հուսալիությունը՝ 99.8 %,
- կետերի միացումը՝ յուրաքանչյուրը 1Գբ թողունակությամբ երկու ինտերֆեյսով: Անհրաժեշտության դեպքում պետք է հնարավորություն ընձեռնվի ինտերֆեյսը փոխարինելու 10Գբ-ով:

Հիմնական և տարածաշրջանային ցանցերի յուրաքանչյուր կայան պետք է երկու տարբեր օպտիկա-մանրաթելային մալուխներով միացված լինի ծառայություն մատուցողի ցանցի երկու տարբեր ցանցային սարքավորումներին: Այդ երկու միացումների կազմակերպումը կարող է լինել ինչպես ակտիվ-պասիվ, այնպես էլ ակտիվ-ակտիվ: Մալուխներից մեկի խափանման դեպքում միացման տեխնոլոգիան ոչ ավել քան 100մվրկ ժամանակահատվածում պետք է ապահովի ամբողջ փաթեթների հոսքի տեղափոխումը երկրորդ մալուխի վրա:

Հիմնական և տարածաշրջանային ցանցերը պետք է ապահովեն հեռահաղորդվող թվային հեռուստատեսային ազդանշանների IP հոսքերի տեղափոխման բավարար պայմաններ. փաթեթների թույլատրելի ուշացումը (Delay) չպետք է գերազանցի 8մվրկ-ը, տատանումը (Jitter)՝ ±1 մվրկ-ը:

Հիմնական և տարածաշրջանային ցանցերի ընդհանուր կառուցվածքը պետք է հնարավորություն ընձեռնի լոկալ վերահսկման և կառավարման համակարգի միջոցով իրականացնել թվային հեռուստատեսային հոսքերի համապատասխան կարգավարումներ և երթուղումներ (Routing), առանց ծառայություն մատուցողի միջամտության: Տրամադրվող ծառայությունը պետք է ապահովի MEF (Metro Ethernet Forum) մասնագրում EP-LAN (Ethernet Private LAN) տեսակի ծառայությունների համար նկարագրված թափանցիկության աստիճանը, մասնավորապես պահպանի <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ ցանցի կողմից փաթեթների վրա դրված VLAN թագերը և փաթեթների կարևորության (QoS, CoS) ինֆորմացիան, թափանցիկ տեղափոխի (թունելավորի) կարեվորագույն 2-րդ մակարդակի կառավարման արձանագրությունները (Key Layer 2 Control Protocols) առանց ծառայություն մատուցողի հետ կոորդինացման անհրաժեշտության:

Ծառայություն մատուցողը պետք է ապահովի շուրջօրյա տեխնիկական սպասարկում իր կողմից մատուցվող ծառայությունների համար: Տեխնիկական սպասարկումն իր մեջ պետք է ներառի

Հեռախոսային սպասարկում, հայտի ստեղծում, ստեղծված հայտերի կառավարում և խնդիրների գերատիվ լուծում:

Ծառայություն մատուցողը յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ կարող է իրականացնել օպտիկա-մանրաթելային համակարգի պրոֆիլակտիկ աշխատանքներ: Ընդ որում պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացման ժամանակացույցը ծառայություն մատուցողը մինչև տվյալ տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը պետք է գրավոր համաձայնեցնի <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց> ՓԲ ընկերության հետ:

Ծառայություն մատուցողը պետք է տրամադրի ծառայության բոլոր կետերի մոնիթորինգի ինֆորմացիա, մասնավորապես տվյալ պահին օգտագործման արագության գրաֆիկ՝ միջինացված 5 րոպեի համար: Ծառայություն մատուցողի և <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց> ՓԲ ընկերության պարտավորությունների սահմանազատումը կատարվելու է ցանցի և վերջնակետային սարքավորումների համակցման կետերում:

Օպտիկա-մանրաթելային համակարգին հեռուստակայանների միացումն անհրաժեշտ է իրականացնել ըստ ստորև ժամանակացույցի.

– Օպտիկա-մանրաթելային համակարգի տոպոլոգիայի ներկայացում	24.06.2014թ.
– Երևան, Գյումրի, Ծավ, Մեղրաձոր, Սարատակ, Գեղաձոր, Արմաշ, Զովաշեն, Ամասիա, Քաջարան, Վարդանիձոր, Կատարի, Խնածախ, Շիկահող, Կապան-1, Կապան-2, Եղվարդ, Գորայք, Նորաշեն, Շնող, Թեղուտ, Օձուն	01.08.2014թ.
– Սևանի լեռնանցք, Պուշկինի լեռնանցք, Ստեփանավան, Ապարան, Ծաղկաձոր, Արեգ, Այրում, Բերդ, Բլդանչայ, Վասիլև, Չինչին, Սանահին, Ախթալա, Սարալանջ, Սպիտակ, Չկալով, Ջերմուկ, Վայք, Թերփ, Էջմիածին	20.08.2014թ.
– Սևան, Վանաձոր, Սիսիան, Արտաշատ, Վեդի, Գավառ, Մարտունի, Աշտարակ, Պտղնի, Չարենցավան, Եղեգնաձոր, Հրազդան, Վարդենիս, Ճամբարակ, Ագարակ, Գորիս, Մեղրի, Իջևան, Դիլիջան-1, Սևքար, Նոյեմբերյան, Դիլիջան-2	10.09.2014թ.

Պատվիրատու
"Հայաստանի հեռուստատեսային և
ռադիոհաղորդիչ ցանց" ՓԲԸ
ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
"Յունիբանկ" ՓԲԸ
ՀՎՀՀ 01501898
ՀՀ 24100200177400

.....
ստորագրություն
Կ.Տ.

Կատարող
Յուքոմ" ՍՊԸ
ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1
"Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան" ՓԲԸ
ՀՎՀՀ 00024873
ՀՀ 001-264993-001

.....
ստորագրություն
Կ.Տ.

Հավելված 1.1
«02» հունիս 2014թ. կնքված N ՀՀՈՅ-ԲԸՀԾՁԲ-14/1
ծածկագրով պայմանագրի

Ցանկ
հիմնական և տարածաշրջանային ցանցերի կայանների

Հիմնական ցանց	Տարածաշրջանային ցանցեր
1. Երևան* (44⁰ 32′ 10.0″ E, 40⁰ 10′ 15.2″ N)	1. Ապարան (44⁰ 21′ 04.6″ E, 40⁰ 34′ 51.7″ N) 2. Գեղաձոր (44⁰ 09′ 59.1″ E, 40⁰ 37′ 42.5″ N) 3. Արեգ (43⁰ 47′ 28″ E, 40⁰ 22′ 59″ N) 4. Աշտարակ (44⁰ 22′ 11″ E, 40⁰ 18′ 27″ N)
2. Գյումրի (43⁰ 50′ 26″ E, 40⁰ 48' 59" N)	5. Ամասիա (43⁰ 49′ 45″ E, 40⁰ 59′ 03″ N) 6. Սարատակ (43⁰ 51′ 35″ E, 40⁰ 39′ 38″ N)
3. Պտղնի (44⁰ 35′ 12.2″ E, 40⁰ 15′ 44.6″ N)	7. Չարենցավան (44⁰ 36′ 58.4″ E, 40⁰ 22′ 59.2″ N) 8. Հրազդան (44⁰ 46′ 04.9″ E, 40⁰ 30′ 49.1″ N) 9. Ծաղկաձոր (44⁰ 42′ 51.7″ E, 40⁰ 31′ 52.7″ N) 10. Մեղրաձոր (44⁰ 39′ 00″ E, 40⁰ 36′ 30″ N)
4. Գավառ (45⁰ 07′ 58,5″ E, 40⁰ 22′ 51,5″ N)	11. Մարտունի (45⁰ 18′ 15.7″ E, 40⁰ 07′ 36.6″ N) 12. Վարդենիս (45⁰ 45′ 40.1″ E, 40⁰ 12′ 58.1″ N) 13. Ճամբարակ (45⁰ 21′ 42,4″ E, 40⁰ 35′ 58,1″ N) 14. Սևանի լեռնանցք (45⁰ 55′ 53,5″ E, 40⁰ 39′ 27,9″ N) 15. Սևան (44⁰ 56′ 34.5″ E, 40⁰ 33′ 33.1″ N)
5. Իջևան (45⁰ 11′ 36,0″ E, 40⁰ 51′ 51,1″ N)	16. Բերդ (45⁰ 25′ 50,0″ E, 40⁰ 52′ 47,3″ N) 17. Դիլիջան-1 (44⁰ 51′ 40.3″ E, 40⁰ 44′ 30.5″ N) 18. Սևքար (45⁰ 07′30.4″ E, 41⁰ 00′ 55.1″ N) 19. Նոյեմբերյան (44⁰ 59′ 25.2″ E, 41⁰ 10′ 38.6″ N) 20. Այրում (44⁰ 54′ 36.8″ E, 41⁰ 11′ 05.0″ N) 21. Դիլիջան-2 (44⁰ 52′ 00″ E, 40⁰ 43′ 30″ N) 22. Բլդանչայ (44⁰ 49′ 37.3″ E, 40⁰ 44′ 39.5″ N) 23. Վասիլև (44⁰ 51′ 25″ E, 40⁰ 42′ 30″ N) 24. Չինչին (45⁰ 22′ 00″ E, 40⁰ 54′ 50″ N)
6. Արտաշատ (44⁰ 32′ 56″ E, 39⁰ 57′ 21.2″ N)	25. Վեդի (44⁰ 40′ 33″ E, 39⁰ 56′ 40″ N) 26. Արմաշ (44⁰ 48′ 20″ E, 39⁰ 46′ 21″ N) 27. Զովաշեն (44⁰ 59′ 36″ E, 39⁰ 49′ 47″ N)
7. Էջմիածին (44⁰ 17′ 37.3″ E, 40⁰ 09′ 32.6″ N)	- -
8. Եղեգնաձոր (45⁰ 20′ 59″ E, 39⁰ 46′ 16″ N)	28. Ջերմուկ (45⁰ 39′ 45″ E, 39⁰ 49′ 51″ N) 29. Վայք (45⁰ 27′ 39″ E, 39⁰ 41′ 11″ N) 30. Թերփ (45⁰ 42′ 46″ E, 39⁰ 45′ 35″ N)
9. Կապան-1 (46⁰ 23′ 59″ E, 39⁰ 11′ 56′ N)	31. Կապան-2 (46⁰ 23′ 20″ E, 39⁰ 13′ 10″ N) 32. Սիսիան (45⁰ 58′ 28″ E, 39⁰ 31′ 11″ N) 33. Գորայք (45⁰ 48′ 47″ E, 39⁰ 40′ 30″ N) 34. Եղվարդ (46⁰ 32′ 30″ E, 39⁰ 13′ 35″ N) 35. Քաջարան (46⁰ 10′ 46″ E, 39⁰ 08′ 28″ N) 36. Վարդանիձոր (46⁰ 13′ 43″ E, 38⁰ 59′ 26″ N) 37. Ագարակ (46⁰ 10′ 58″ E, 38⁰ 53′ 39″ N) 38. Գորիս (46⁰ 20′ 39″ E, 39⁰ 33′ 20″ N) 39. Կատարի (46⁰ 22′ 40″ E, 39⁰ 21′ 56″ N) 40. Մեղրի (46⁰ 14′ 44″ E, 38⁰ 53′ 38″ N) 41. Խնածախ (46⁰ 23′ 52″ E, 39⁰ 35′ 46″ N) 42. Շիկահող (46⁰ 29′ 56″ E, 39⁰ 05′ 06″ N) 43. Ծավ (46⁰ 29′ 50″ E, 39⁰ 02′ 49″ N)
Հիմնական ցանց	**Տարածաշրջանային ցանցեր**
10. Վանաձոր (44⁰ 26′58″ E, 40⁰ 49′ 21″ N)	44. Պուշկինի լեռնանցք (44⁰ 26′ 10″ E, 40⁰ 54′ 25″ N) 45. Ստեփանավան (44⁰ 20′ 56″ E, 41⁰ 04′ 14″ N) 46. Չկալով (44⁰ 39′ 05″ E, 40⁰ 56′ 25″ N) 47. Օձուն (44⁰ 36′ 44″ E, 41⁰ 04′ 40″ N) 48. Սանահին (44⁰ 39′ 28″ E, 41⁰ 05′ 47″ N) 49. Ախթալա (44⁰ 46′03″ E, 41⁰ 08′ 37″ N) 50. Սարալանջ (44⁰ 05′ 32″ E, 40⁰ 52′ 13″ N) 51. Սպիտակ (44⁰ 15′ 45″ E, 40⁰ 49′ 53″ N) 52. Նորաշեն (440 19′ 26″ E, 410 11′ 53″ N) 53. Շնող (44⁰ 50′ 34″ E, 41⁰ 08′ 32″ N) 54. Թեղուտ (44⁰ 50′ 30″ E, 41⁰ 06′ 35″ N)

Ծանոթագրություն
* Երևանում տեղակայվելու են մուլտիպլեքսների ծնավորման գլխակայանը (Head-End) և Արագածոտնի մարզային մուլտիպլեքս կայանը

Պատվիրատու
"Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց" ՓԲԸ
ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
"Յունիբանկ" ՓԲԸ
ՀԿՀՀ 01501898
ՀՀ 24100200177400

.....
ստորագրություն

Կատարող
Յուքոմ" ՍՊԸ
ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1
"Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան" ՓԲԸ
ՀԿՀՀ 00024873
ՀՀ 001-264993-001

.....
ստորագրություն